ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԱՅԳԵՎԱՆԻ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

АРМАВИРСКИЙ МАРЗ

МУНИЦИПАЛИТЕТ

С. АЙГЕВАН

N 157

18 12 2014թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

պարոն Ա.Ղահրամանյանին

**Հարգարժան պարոն մարզպետ**

Կից Ձեզ ենք ուղարկում Արմավիրի մարզի Այգեվան համայնքի ավագանու 2014թ.դեկտեմբերի 11-ի թիվ 13 արտահերթ նիստի արձանագրությունները :

Առդիր՝ 8 թերթ

Այգեվան համայնքի ղեկավար Ս.Էքիզյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

«11 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ. ԹԻՎ29

## ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան գյուղական համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի11 թիվ 13 արտահերթ նիստի օրակարգը :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

1. Սարգսյան Մարինե ----------------
2. Սահակյան Պարգև ----------------
3 Քեսաբլյան Ալեքսանդր ----------------
4.Այվազյան Ռազմիկ ----------------
5.Ամիրխանյան Գագիկ ----------------
6.Սարգսյան Խաչիկ ----------------
7.Աղախանյան Զաքևոս ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՔԻԶՅԱՆ

2014թվականի դեկտեմբերի 11
Գ.Այգեվան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեվան
գյուղական
համայնքի Ավագանու 2014թ
դեկտեմբեր-ի 11-ի
Թիվ 13 արտահերթ
նիստի

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Թիվ-13 արտահերթ նիստ 11.12.2014թ. ժամը՝ 12⁰⁰

29.ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Ս. Էքիզյան/

30.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Ս. Էքիզյան/

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս. Էքիզյան/

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅԱՑՐԱԾ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

/Զեկ. Ս. Էքիզյան/

33.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Աշխատակազմի ղեկավար Գ.Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՈՐՈՇՈՒՄ

11. Դեկտեմբերի 2014թ. թիվ 30- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով՝ Այգեվան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի հաստիկացուցակները և պաշտոնական դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

1. Սարգսյան Մարինե ----------------
2. Սահակյան Պարգև ----------------
3 Քեսաբյան Ալեքսանդր ----------------
4.Այվազյան Ռազմիկ ----------------
5.Ամիրխանյան Գագիկ ----------------
6.Սարգսյան Խաչիկ ----------------
7.Աղախանյան Զաքևոս ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՔԻԶՅԱՆ

2014թվականի դեկտեմբերի 11
Գ.Այգեվան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեվան գյուղական
համայնքի Ավագանու
2014թ,դեկտեմբերի 11-ի թիվ 13
արտահերթ նիստի

Գյուղապետարան

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | դրույքը | 2015թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | | 1 | 220,0 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | | 1 | 124,0 |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1.2--1 | 1 | 123,0 |
| 7 | Առաջատար մասնագետ | 3.1--1 | 1 | 121,0 |
| 9 | Առաջատար մասնագետ | 3.1--2 | 1 | 121,0 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 3.2-1 | 1 | 110,0 |
| 13 | 2-րդ կարգի մասնագետ | 3.3--1 | 1 | 90,0 |
| 15 | գործավար | | 1 | 71,0 |
| 17 | վարորդ | | 1 | 121,0 |
| | Ընդամենը | | 9 | 1101,0 |

Գրադարան

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Պաշտոնի ծածկագիրը | դրույքը | 2015թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | գրադարանի վարիչ | | 1 | 66,140 |
| 2 | Հավաքարար | | 1 | 66,140 |
| 3 | Այգեպան | | 1 | 66,140 |
| | Ընդամենը | | 3 | 198,420 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | էլեկտրիկ (պայմանագրային) | | 1 | 66,140 |
| 2 | վարորդ-աղվաթափող (պայմանագրային) | | 1 | 79,5 |
| | Ընդամենը | | 2 | 145,640 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 11 » դեկտեմբերի 2014թ. թիվ 31-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 2015 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 32709,0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 32709,0 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ

1. Սարգսյան Մարինե
2. Սահակյան Պարգև
3. Քեսաբլյան Ալեքսանդր
4. Այվազյան Ռազմիկ
5. Ամիրխանյան Գագիկ
6. Սարգսյան Խաչիկ
7. Աղախանյան Զաքեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԵՔԻԶՅԱՆ

2014 թվականի դեկտեմբերի 11
գ. Այգեվան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Թիվ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄ

11. Դեկտեմբերի 2014թ. թիվ 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅԱՑՐԱԾ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ,հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից տրված թիվ ԱՏ-28/11/2014-2-0267 և ԱՏ-28/11/2014-2-0261 տեղեկանքները ` Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Կամո Ռազմիկի Մովսիսյանին վերադարձնել 374.648 հազար ՀՀ դրամ գումար , Աշոտ Ռուբենի Սահակյանին 341.248 հազար ՀՀ դրամ՝որպես աճուրդային կարգով վաճառված սակայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման կողմից տրված թիվ ԱՏ-28/11/2014-2-0267 և ԱՏ-28/11/2014-2-0261 տեղեկանքներով կասեցված գործարքների գումար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿԹՂՄ

1. Սարգսյան Մարինե ----------------
2. Սահակյան Պարգև ----------------
3 Քեսաբյան Ալեքսանդր ----------------
4.Այվազյան Ռազմիկ ----------------
5.Ամիրխանյան Գագիկ ----------------
6.Սարգսյան Խաչիկ ----------------
7.Աղախանյան Զաքևոս ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԷՔԻԶՅԱՆ

2014թվականի դեկտեմբերի 11
Գ.Այգեվան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Թիվ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄ

11. Դեկտեմբերի 2014թ. թիվ 33

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ

ՇԵՆՔԸ ԱՆՅԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով ,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Թոռնիկ Սարգսյանի դիմումը Այգեվան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1Արմավիրի մարզի Այգեվան Համայնքի սեփականություն հանդիսացող 5-րդ փողոցի 10-րդ շենքի 4-րդ վարչական շենքի 155.2 քմ ընդհանուր մակերեսով հատվածը նվիրատվության կարգով տրամադրել տվյալ շենքում 20տարուց ավել բնակվող Թոռնիկ Խաչիկի Սարգսյանին և նրա ընտանիքի անդամներին ՝ Մարինե Վաղգեսի Սարգսյանին ,Հռիփսիմե Թոռնիկի Սարգսյանին, Սարգիս Թոռնիկի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

1. Սարգսյան Մարինե
2. Սահակյան Պարգև
3 Քեսաբյան Ալեքսանդր
4.Այվազյան Ռազմիկ
5.Ամիրխանյան Գագիկ
6.Սարգսյան Խաչիկ
7.Աղախանյան Զաքևոս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԷՔԻԶՅԱՆ

2014թվականի դեկտեմբերի 11
Գ.Այգեվան